



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խորագրաւորումը մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Меликъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Պարտաւորութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօտան օրերէն).

Պարտաւորութիւնը ընդունւում է ամէն յետաւում.

Պարտաւորութիւնները համար վճարում են

խորանային տարածութիւնը 10 կոպէկով.

Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգագրական հաւաքածոներ. — ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Թիֆլիսի քաղաքային ընտ-
րութիւնները. Օպերային ներկայացումները.
Նամակ վերին-Ազգութիւն. Ներքին լուրեր. — ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի լրագրութիւնը.
Ջորայի թաղումը. Արաւելի լուրեր. — ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Մովսէս Խորենացին և նրա ընտա-
նաները.

ԱԶԳԱՅՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆՈՒՆԵՐ

Պետերբուրգի թանգարաններից մէկը
գիտաւարութիւն ունի ժողովել բազմաթիւ
ազգագրական առարկաներ կողմացի-
ների և մասնաւորապէս հայերի կեան-
քից: Այդ թանգարանը կայսր Ալեքսանդր
III-ի թանգարանն է, որ ունի յատուկ
ազգագրական բաժին:

Եթէ թանգարանին աջողկի իրագործել
իր գիտաւարութիւնը փոքր ի շատէ բա-
ւարար կերպով, այն ժամանակ մենք կու-
նենանք Պետերբուրգում հայերի կեանքից
ազգագրական մի հաւաքածու, որ կարող
կը լինի նիւթ ծառայող գիտական հետա-
զոտութիւնների և ուսումնասիրութիւն-
ների համար: Գիտականը, ուսանողը,
մասնաւոր հետաքրքրվողը կը գտնեն այն-
տեղ հետաքրքրական առարկաներ, որոնք
կը լուսարանեն եղած գիտական հետա-
զոտութիւնները:

Թանգարանը ժողովում է իրեր, որոնք
վերաբերում են բնակարանների պատկանե-
լիքներին, մարդկանց հագուստին և զար-
դերին, ուտելիքներին, արհեստներին, առ-
տընին կեանքին, հաւատարմութիւններին, նա-
խապաշարմունքներին, ժողովրդական բժշ-
կութեանը և առհասարակ այս կամ այն
ազգի ցեղական առանձնայատկութիւննե-
րին: Թանգարանը պարտաւոր է այդ իրերը
գնել փողով, որպէս զի դիւրացրած լինի
տեղական ժողովուրդների գործը, որոնց շատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՒ ՆՐԱ ՔՆՆԱԴԱՆՆԵՐԸ

Арабское извлечение из египетской хроники Мар-
баса. (Къ вопросу объ истории Моисея Хоренскаго).
Н. Марр. 1902.

Արաբական քաղաքացի Մարբասի սիրիական քրոնի-
կոնից (Մովսէս Խորենացու պատմութեան հարցին վե-
րաբերելով). Ն. Մարրի 1902.

Պրոֆէսոր Մարր, չը սպասելով գտնված Մա-
րբաս Բաղդադացու ժամանակագրութեան հրա-
ւարակութեան, շտապեց Պետերբուրգի հա-
մադարանի միջոցով ստանալ Պարբի ազգային
մասնաւորապէս ընտն ձեռագիրը և ընկեր
Անայի ընտնութեան հետեւանքի մասին նա
կարողացաւ վերոյիշեալ ընտնութեան արեւել-
ական բաժնի նիւտումը:

Ձեռագիրը քար չուէն է, այսինքն գրված է
արաբերէն, բայց ասորերէն տառերով կամ գրու-
թեամբ. նա, անկասկած, թարգմանութիւն է
գիրականից և չէ ներկայացնում Մարբասի
մասնով գործը, այլ արաբ քաղաքացիներ, որով
հետեւ վերնագիրն այսպէս է. «Այժմ սկսեց
ընտրութիւնը քաղաքացիներ Մարբասի քաղ-
ղացու. ժամանակագրութիւնից»: Այդ քաղ-
ղաքը սկսվում է ներքովից և վերջանում է
դիւրի Հեղինէի, Կոստանդնուպոլի մօր և Սալ-
զանիւր պատմութեամբ:

Մինչպէս երեւում է, ասում է Մարր, «Ժամա-
նակագրութեան» հեղինակը լայն ծրագրով է
գրել, դառնելով նոյն իսկ արաբական քաղաքա-
ցի հիման վրա: Նա գրել է ընդհանուր պատ-
մութիւն, որի մէջ տեղ է տալիս ոչ միայն քա-

անգամ վնասում է անհրաժեշտ ծախսերի
հարցը:

Անկասկած՝ շատ լաւ կը լինէր, որ կո-
կասցիների և նրանց թուում հայերի ազ-
գագրական մի լրակատար թանգարան
գոյութիւն ունենար մեր երկրում: շատ
լաւ կը լինէր, որ ներկայումս գոյութիւն
ունեցող կողմասեան թանգարանը Թիֆլի-
սում ձուլացնէր իր հաւաքածոները և
տար մեր երկրի ազգագրական հարստու-
թեան պատկերը: Սակայն մեզ համար ու-
րախալը պէտք է լինի, երբ մայրաքաղա-
քում և գիտական կենտրոններում ցան-
կութիւն է յայտնվում ունենալ մեր երկրի
ազգագրական կեանքը: Այդպիսի հաւաքա-
ծոնները կը նպաստեն, որ մեզ աւելի լաւ
ձանաչեն և մեր ազգագրական նիւթերը
կարգին մշակութեան ենթարկեն: Դա մեզ
համար և ուսանելի է, և օգտակար և
ախորժելի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒՆ

Գնալով բազմաձև են հասարակական այն-
պիսի երեւոյթները, որոնք կարծես այն պիտի
ազգացնեն, թէ հայ ժողովուրդը մի հիւծ-
ված, ուժեղացող, սակաւարկութեանց տա-
ռապող հիւանդ է: Այդ երեւոյթներից դառն-
ելով թուում է, թէ նա կարծես գրում է իր ան-
յուստի դրութիւնը, կարծես գիտէ, որ պէտք
է ճիշդ թափել մի կտոր օդ չնկու, կենդա-
նութեան մի քանի գործոններ ձեռք բերելու
համար: Եւ նա թափում է ճիշդ, նա անում
է, չէ խնայում: Բայց ինչ, Դուրս են գալիս
այդ ճիշդը հիւանդոտ, յուսահատական, նրանք
թողնում են խղճալի տպաւորութիւն, նրանք
այլ եւս կենդանութեան նշաններ չեն կարող
դառնալ, այլ ցաւաւոր շղաճգութիւնների են
նման: Այս դրութեան կենդանի, առօրեայ վիճ-
ակ հաստատութիւնը հայկական թատրոնն է,
այն էլ Բազում: Բազում երկու ուս լրագիր-
ների էջերից հեծածանքներ են արձակվում:

Պարբան դէպքերին. օրինակ, նա տեղեկու-
թիւններ է տալիս Պատմի փիլիսոփայութեան,
տեղեկանք դարեւելի ծագման մասին, Հրեա-
տանի եթէ աղանդների մասին Գրիտոսի
յայտնութեան ժամանակ և այլն: Ի հարկէ,
արաբական քաղաքացի մէջ այդ տեղեկութիւն-
ները չափազանց համառոտ են: Առանձին ու-
շաղագրութիւն է ներկայումս լեզուաբաններին, մաս-
նաւորապէս քրիստոնէականներին:

Առաջ բերենք այժմ քրոնիկոն մի քանի օրի-
նակներ, որոնք ցոյց կը տան, թէ նոյն իսկ
մասնաւոր հարցերի մէջ դէպի իրենցացին
առաջած անվստահութիւնը անհիմն է:

1) Մ. Խորենացին, կամենալով ազգացուցա-
նել Արքայ թագաւորի հօր վերաբերմամբ, թէ
մի մարդի երկու անուն տալը գործածական է
եղել հնում, օրինակ է բերում ի թիւս այլոց
Հերովդէսին, որին իբր թէ կոչում էին նաեւ
Ազգիպատ, ուրեմն Հերովդէս Ագրիպատ:
Այդ, Կարբէրը այդ փոքր փաստի մէջ եւս
նկատում էր խորենացու անձնական հայեցո-
ղութիւնը: Նա ասում է, որ խորենացուն հա-
կաւոր էր այդպիսի մի փաստ և այդ նպատա-
կով նա օգտու է քաղել անմիջապէս Եւսեբիո-
սից, որը, հիմնվելով Յովսէփ Ճովիպացու պատ-
մութեան վրա, օրոքը Հերովդէսը յիշված է
Ագրիպատ անունով, նկատել է, թէ այդ անձը
կարող էր ունենալ երկու անուն: Եւ անա խո-
րենացին իւրացնելով այդ բացատրութիւնը,
բերել է, իբրեւ օրինակ կրկնակ անուն, Ագ-
րիպատ-Հերովդէսին Սակայն այժմ գուրը է
զայլա, որ Մարբասի մէջ եւս այդ կրկնակ
անունով է յիշված Հերովդէսը, այսպէս «Հե-
րովդէս» — Ագրիպատ: Ուրեմն խորենացին
քաղել է այդ փաստը Մարբասից:

2) Ստանտրուկի մասին խորենացին պատմում
է, որ սա ուղարկեց Արքայի կնոջ Հեղինէին
Սառան և յանձնեց նրան Միջագետքի իշխա-

կարգում էր, եւ ձեր առջեւ օրհասական շղա-
ճութիւնների ցաւալի պատկերն է ամբողջա-
նում:

Անայի պատկերի գլխաւոր գոյնը Բաց-
վում է Բազում հայկական ներկայացումների
մէջ: Անային ներկայացումն է, բայց թա-
րօնը դառնալ է Երկրորդ ներկայացում — նոյն-
պէս: Դառնալ թաթաւանակաւ դաշինք, այն էլ
առաջին ներկայացման գիշերը, այն ցուրտ,
մահացող իրականութիւնն է, որ մանկան ջը-
ղաճգութիւնների լրակատար պատկերն է տա-
լիս: Մարդիկ աշխատել են, դէս ու դէս են
ընկել, դերասանական ընկերութիւն են կազ-
մել: Պատրաստ է գործը, բայց... դառնալ դա-
լիս: Ինչ անել «Կաւմի» լրագրի լեզունգները
գրում է:

Նայելով դաշինքին, մենք ակամայ հարց
էինք տալիս, ինչու, ինչ քանի համար Բազ-
ում գործութիւն ունի հայոց թատրոն, հար-
կաւոր է նա արդեօք որ եւ է մէկին, ար-
դեօք աւելորդ չէն մի խումբ մարդկանց ջան-
քերը, որոնք կարողացածին չափ օգնութիւն
են հասցնում հայոց թատրոնին և նպատակ
են դրել ինչպէս էլ լինի՝ պահպանել նրան:
Այս եթէ թատրոնական մէջոնի բացման ե-
կել են միայն մի քանի տասնեակ մարդիկ
այն քաղաքի ազգացականութիւնից, որ իր մէջ
հաշուում է շատ տասնեակ հազարներով հա-
յեր, չէ նշանակում սա, թէ թատրոն հար-
կաւոր չէ մտաւոր, գրողների, խաղաղութե-
րի և իրական աղանդի բազմաքան, ուր չը
կան եւ չեն կարող լինել հոգեկան շահեր:
Ձեռնարկում սա, թէ հայոց թատրոնը
Բազում ներկայացումն է գոյով ստեղծած,
անհրաժեշտ, մեծած մի հիմնարկութիւն: Ըստ
և ամօթ էր զգացվում այս ներկայացմանը
հայոց ինտելիգենցիայի, Բազում հայ հասա-
րակութեան համար:

Եւ ինչ, ցաւ և ամօթ զգացող եղան
Բազում Անցում է երեք օր, նոր ներկայա-
ցում է տրվում հայկական դերադր ընտի վրա:
Այս անգամ էլ Բազում միւս լրագիրը, «Յա-
կինցիա Ինթերնացիոնալ», կանգ է առնում նոյն երե-
ւոյթը — դառնալ դաշինքի առաջ եւ ասում է.

Ինչու հասարակութիւնը չէ յաճախում
հայկական ներկայացումները Հայերի կօթ-
նիւն Բազում բազմաթիւ է, նա քիչ կըրթ-

նութիւնը (Գ. Ս. 35). Կարբէրը ասում էր, որ
խորենացին որովհետեւ իր տեղեկութիւնները
քաղել է Եւսեբիոսի եկեղեցական պատմու-
թիւնից, իսկ այդ պատմութեան հայերէն վեր-
սիայի մէջ գիտամբ Հեղինէն կոչված է «Թա-
գուհի Միջագետքի», մինչ նա միայն «Ագրի-
պան թագաւորին» է եղել, դրա համար եւ այդ-
պէս է գրել:

Սակայն Մարբասի մէջ, որ խորենացուն
ծառայել է իբրեւ աղբիւր, այդ Հեղինէ թա-
գուհին նոյնպէս կոչված է «Միջագետքի
թագուհի»:

3) խորենացին այդ Հեղինէին անունում է
ըրիտաւորեալ: Կարբէրը ասում է, որ Հեղինէն
հրէական էր եւ խորենացին ինքն է ցանկացել
նրան քրիստոնէայ չինել: Սակայն այժմ մենք
տեսնում ենք Մարբասի Գրիտոսի մէջ (էջ
75 ձ). որ այդ մանրամասնութիւնը բացատր-
վում է ոչ խորենացու ցանկութեամբ:

4) խորենացին Եւսեբիոսի թագաւորներին
անունում է հայոց թագաւոր: Մինչ յայտնի է,
որ Եւսեբիոսի թագաւորները հայկական չէին:
Այդ «հայացումը» վերագրում էին ընտանաւոր-
ները խորենացուն իբրեւ նրա հնարած: Այդ
Մարբասի մէջ գրված է. «Երբ հայերը տեսան,
որ պարսիկները (թուրքացիներ) այն ժամանակ
նրանք երկրորդ անգամ իրանց թագաւոր արին
եւ անուանեցին նրան Արքայ: Նա առաջինի
էր, քալ եւ փորձված պատերազմների մէջ: Նա
եւ նրա որդիները տիրեցին Բաբելոնի սահման-
ներին. 380 տարվայ ընթացքում, յունական
թուրքների 180-ից մինչ (բաց է թողնված), Եւսե-
բիոսի թագաւորները տիրում էին Հայաստա-
նին. զրաւից յետոյ իշխանութիւնը ստացան
հռոմէացիները 470 թուականից»:

Մ. Խորենացին, ճիշդ է, մի քիչ ուրիշ դա-
նալան մանրամասնութիւններով է հաղորդում
այս իրողութիւնը, բայց մենք տեսնում ենք,

ված մարդիկ չունի իր մէջ, ամբողջ մեծա-
մասնութիւնը գրագէտ է, օրրում է իր մայ-
րենի լեզու, հայերը ունենալ դասակարգին
են պատկանում: Այսպիսի պայմանների մէջ
թուում է, թէ հայկական ընտի պիտի ծաղկէ
եւ եթէ ներկայ օրգոնում հայերը չեն յաճա-
խում ներկայացումները, կան, երեւի, պատ-
ճառներ և լուրջ պատճառներ: Ձեռնարկ
գտնում են, այն էլ բաւական մեծ թուով,
ոչ ուսաց ներկայացումներին:

Փորձելով ցոյց տալ պատճառները, լրա-
գիրը ընկնում է մի անյարմար դրութեան մէջ:
Մեղաւորները, նրա կարծիքով, երկու կողմերն
են, թէ ներկայացում կազմողները եւ թէ հա-
սարակութիւնը: Թատրոնի զեկաւորները թաթա-
մանական պիեսներ են գտնում, թոյլ ոյժեր են
բեմ հանում: Եւսեբիոս, բայց հասարակու-
թիւնը չը գնաց առաջին ներկայացման, ու-
րեմն ինչպէս կարող էր իմանալ, որ դերասան-
ները թոյլ են, այդպէս դատելու համար պէտք
էր, որ հասարակութիւնը գնար տեսնէր: Հա-
սարակութեան մեղքն էր, լրագրի կարծիքով, այն
է, որ նա ուղղում է անպատճառ տաղանդներ
տեսնել բեմի վրա, անուն ունեցող դերասան-
ներ: Դա, ի հարկէ, չափազանցած պահանջ է,
անհիմն պահանջ է, բայց չէ կարելի չընդունել
եւ այն, որ հասարակութիւնն էլ պահանջներ
անելու իրաւունք ունի: «Կաւմի»-ի գրածնե-
րից մենք տեղեկանում ենք, որ առաջին ներ-
կայացմանը բեմի վրա տեղի ունէին այնպիսի
անկարգութիւններ, որոնք միայն սառցնել կարող
են յաճախողներին:

Բայց հարցը այս չէ: Լրագիրը դժբախտ
դրութեան դէմ միայն այս միջոցն է գտնում:

Ազգային հպարտութեան զգացումները պար-
տաւորեցնում է Բազումի կենտրոններին այս
ուղղութեամբ փոքր ինչ գոհ բերել եւ, յա-
ճախելով թատրոնը, պահպանել նրան նիւ-
թաւոր: Միայն այս պատճառով կարելի է
դերասաններ ստեղծել եւ թոյլ չը տալ, որ
մայրենի բեմ փակվի: Մենք խորապէս հա-
մոզված ենք, որ մեր ընթերցողների մէջ
քիչ չեն այնպիսիները, որոնք համաձայն են
մեզ հետ: Դրանց են ուղղած մեր խօսքերը,
նրանք անկասկած պարտաւոր են ուղարկել
իրանց ծանօթներին թատրոն եւ համոզել
նրանց, որ ընտանաւոր շատ եւ շատ հեշտ է,

որ այսպէս կոչված «Եւսեբիոսի» թագաւորների
հայացումը նրա երեւակայութեան ծնունդ չէ:
Մի այլ տեղ Մարբասի քաղաքացի մէջ դար-
ձեալ գրված է. «Թագաւորը: Արքայը Նեղիսա-
յում հայերի վրա, գրեց նամակ Գրիտոսին»:

Բաւականանում ենք այս հատուածներին:
Տարակիտ չը կայ, որ Մարբասի այդ Գրի-
տոսի գրեալը — թէեւ քաղաքացի էր ոչ
ամբողջական — անգիրն նշանակութիւն ունի
Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան
հարցի համար: Մենք տեսնում ենք մէջ է կայա-
նում այդ հարցը. այժմ տեսնում ենք, որ այդ
բարդ հարցի մի էջը լուսաւորվում է. յայտն-
վում է, որ Մ. Խորենացին ինքն չէ հնարել
Մարբասի աղբիւրը, կեղծիք չէ արել, այլ
արդարեւ, իր հայոց պատմութիւնը գրելիս
ձեռքի տակ է ունեցել այդ աղբիւրը:

Թէեւ այդ գրեալով Մովսէս Խորենացու մա-
սին գրված հարցը չէ լուծվում զեռ, բայց յա-
մենայն դէպս, ինչպէս շատ ճիշդ նկատում է
պրոֆէսոր Մարրը, «Մարբասի Գրիտոսի» արա-
բական քաղաքացի գրաւի հարուած է հասց-
նում այն ծայրահեղ ուղղութեան Հայոց
պատմութեան ընտանաւորութեան մէջ, որը
համարում էր խորենացու կողմից հնարած այն
ամենը, ինչ որ հաստատութիւն չէր գտնում
մինչեւ այժմ յայտնի գրաւոր յիշատակարան-
ների մէջ:

Մենք պէտք է աւելացնենք, որ պրոֆէսոր
Մարրը, ինչպէս անձամբ մեզ յայտնեց, յոյս ու-
նէր, որ գուցէ նա գտնէ Սինա սարի վանքում —
ուր նա այս ամառ ճանապարհորդեց — Մարի-
բաս Բազումացու ասորական ընտանիքը, յամե-
նայն դէպս նա որոյն էր հետազոտութիւններ
կատարելու այդ վանքում այդ ուղղութեամբ:
Անհամբեր սպասում ենք յարգելի պրոֆէսորի
հետազոտութեան արդիւնքին:

Հ. Առաքելյան

բայց միաժամանակ հայերի պահանջները պէտք է հաւատարակելու հանդիսանան եղած դերասանների ոյժի հետ, որոնց թիւը շատ սահմանափակ է:

Ահա հէնց այս հրաւերն է, որ ապացուցանում է մեր ասածը, որ հայ ժողովուրդը օրհասական զգաձգութիւններ է անում, հիւանդոտ, ցաւաքար ճիգեր է թափում ապրելու համար: Եւ իրաւ, ինչի նման է այս երեւոյթը: Մի ժողովուրդ կրթված, հասկացող, կուլտուրական համայնքի բոլոր յաւակնութիւններն ունի, բայց նրան դեռ նոր պէտք է ծանօթանալ միջոցով թատրոնի նշանակութիւնը հասկացնել, ազգային հպարտութեան անուշով տաքացնել: Ինչ միջոցներ են սրանք.— ժամանակակար, անհատապաշտ, խախտում ու խղճալի: Մենք չենք հաւատում, թէ ազգաբարոյթիւնը շատ բան կատարէ այդտեղ, չենք հաւատում, որ ծանօթների թախանձանքով թատրոն, գրականութիւն, մամուլ պահպին եւ պահպանվի:— Հիւանդոտ զգաձգութիւններ, այո, որիչ անուն չունի այն դրութիւնը, որի մէջ գտնվում է այժմ հայ ժողովուրդը:

Եւ միայն թատրոնը չէ սրա ապացոյցը: Ամեն ինչ այդ է ասում...

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

III

Անցեալ անգամ «С. Пет. Вѣдомости» լրագրից առաջ բերած մեր քաղաքացիներով մենք աշխատեցինք ապացուցանել, որ անտեղի եւ անարդարացի են հայերի վրա բարդված այն մեղադրանքները, թէ իբր նրանք թոյլ չեն տալիս, որ վրացիները եւ ռուսներն եւս մասնակցեն քաղաքային ինքնավարութեան գործունէութեան: Մի քանի տեղ հայերը գերակշռող տարր են հանդիսանում այս եւ այն քաղաքի դոմանայում այն պատճառով, որ 1892 թ-ի քաղաքային կանոնադրութիւնը ընտրողական իրաւունքը յատկացնում է կապիտալիստ—բուրժուական—արդիւնաբերական տարրին եւ հետագայում է քաղաքային ինքնավարութեան գործունէութեան սակարկելից այն ինտելիգենտ ոյժերը, որոնք այս եւ այն պատճառով գոյքական ցենդ չունեն: Պէտք է ասել, որ քաղաքային կանոնադրութեան այդ թերութիւնը վաղուց ռուսաց մոմուլի քննադատութեան նիւթ է դարձել եւ նոյն իսկ ծրագիր կայ ընտրողական իրաւունքը յատկացնել նաեւ տրանկենցիկներին եւ այդպիսով հնարաւորութիւն եւ միջոց տալ քաղաքի բնակիչների մեծամասնութեան մասնակցել քաղաքային ինքնավարութեան գործունէութեան: Եթէ այդ ծրագիրը, որ կառավարական բարձր չրջանների մէջ եւս ընկնում է, իրագործվի, այն ժամանակ քաղաքային ինքնավարութեան գործը միայն խոշոր կապիտալիստների եւ առեւտրականների ժառանգութիւնը չի լինի, այլ եւ չունենոր եւ ինտելիգենտ դասակարգը կը կոչվի հոգալ եւ մտածել այն քաղաքի շահերի մասին, որտեղ նա բնակվում է պաշտօնով կամ այլ որ եւ է գործով:

Այդ սխառած կունենայ եւ այն առաւելութիւնը, որ ազգութիւնների մասնակցութեան ինտելիկ եւս կը կանոնաւորվի եւ համեմատաբար աւելի հաւասար դասաւորութիւն կը լինի ծայնաւորների ծանկալի է, որ տեղական մոմուլը համերաշխ եւ միարան ջանքերով արծարծէ, մշակէ այն հարցը, թէ ինչպէս անել, որ քաղաքային ինքնավարութեան գործունէութեան մասնակցեն ոչ թէ միայն կապիտալիստ, բուրժուական եւ արդիւնաբերական սահմանափակ տարրերը, այլ եւ ուրիշ տարրերը, ինտելիգենտ ոյժերը: Կամ թէ աւելի լաւ չէր լինի, որ տեղական մոմուլը զբաղվի այն հարցով, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել, որ ծայնաւորի պաշտօնի համար ընտրվեն քաղաքային ինքնավարութեան գործին հմուտ, ձեռնհաս անձինք, որոնք սիրով եւ համակրութեամբ վերաբերվին իրանց ստանձնած պարտաւորութիւններին, առանց ազգութեան խտրութիւն դնելու: Չլիսաւոր հարցն այն պէտք է լինի, որ ծայնաւորը արժանաւոր մարդ լինի, որ ընտրեն արժանաւորին, առանց նկատելու հայ է նա, ռուս, վրացի թէ թուրք: Եթէ ամեն տեղ այդ հայեցակէտով զեկավարվեն քաղաքային ընտրութիւնների վերաբերմամբ, այն ժամանակ մենք ակնառոտ չէինք լինի Երեւանում այնպիսի երեւոյթի, երբ թուրքերը անպայման սեւ են գցում նրան, ով թուրք չէ եւ երբ թուրքները ծայնաւորները, քվելով ասպարէզից, անարժաններն եւ անձեռնհասներն են ընտրվում եւ կոչվում վարելու քաղաքային ինքնավարութեան գործը: Ասպարէզը արժա-

նաւորին պէտք է լինի, ինչ ազգութեան եւ պատկանէ նա—հայ միակ դէպքը, որով պէտք է զեկավարվեն ընտրողները:

Հ. Ս.

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Չորեքշաբթի օպերային խումբը խաղաց Վերդիի «Ռիգոլետտո» օպերան:

Վերդին այդ օպերան գրել է 40 օրվայ ընթացքում Բուսետո քաղաքում 1851 թ-ին: Առաջին անգամ դրվել է այդ օպերան մեծ աշտարակային Վենետիկում նոյն թուականի մարտի 11-ին:

Ռիգոլետտոի առաջին փորձի ժամանակ նկատվել է, որ 4-րորդ գործողութեան մէջ Հերցոգի արիան գուրա է թողնված, հեղինակը խոստանում է շուտով գրել, բայց դիմաւոր թաքցնում է մինչեւ գլխաւոր փորձի օրը ուղեւնաւով միանգամայն զարմարել եւ հիացնել դերասաններին ու հանդիսականներին: Վերդին «La donna e mobile»-ի եղանակը ամենայնոց կտորն էր համարում այդ օպերայում եւ Հերցոգի անհոգ եւ ուրախ արտին մտնել: Նա չը սխալվեց.—այդ տեղը ահագին ֆուրոր, սենսացիա հանեց թէ դերասանների եւ թէ ժողովրդի մէջ:

Վերդիի այդ արձնելի օպերան մեծ աշտարակային խումբը բոլոր եւրոպական բեմերի վրա:

Այդ գիշեր օպերային մասնակցեցին մեծ անձնաթիւ երգչուհի Օլգինա Ֆիլոյի դերում եւ Դեմաբովսկի Հերցոգի դերում: Օլգինայի ծայնը բեմական մեծ ծայն է, միայն միջին նոտաները կորցրել են առաջվայ թարմութիւնը: Խորհուրդ կաանք երգչուհուն երգել այնպէս, ինչպէս գրած է, էֆէկտների ետեւից չընկնել, նա մասնաւոր սիրում է շուտ-շուտ վերին նոտաներով զարմացնել, բայց ցաւօք սրտի աւելի փչացնում է սպաւորուկիւնը եւ հետեւում հեղինակի գրութեւնը:

Հերցոգի դերում առաջին անգամ դուրս եկաւ Թիֆլիսցիներին յայտնի պրոֆեսոր Ռեյնոլդի աշակերտ Դեմաբովսկին, որ ունի փոքր գեղեցիկ լիբրետական տէնոր, լաւ չօլալ եւ գիտէ ծայնին լաւ տիրապետել: Վերին նոտաներում ծայնը քիչ պարզ չէ, որ կարելի է վերագրել ճանապարհի յոգնածութեանը: Պարոնը խոստանում է լաւ ապագայ: Ծայնը գեղեցիկ էր հրնչում վերջին գործողութեան յայտնի կվարտետում: Ափսոս, որ երրորդ գործողութեան արիան բաց թողնվեց, թէպէտ այդ տեղը ռուս երգչները մեծ մասամբ չեն երգում: Չօլալիստնով Ռիգոլետտոի դերում տիպիկական չէր, գրիւմ եւ հագուստը չէին յիշեցնում միջնադարեան պալատական հանաքայիներին: Այդ գիշեր երգելը շուտ շուտ չեղնում էր չափից եւ անսամբլներում տեղ տեղ չէր երգում: Միւս դերասանները՝ Սերգէյեւն Մալեքովի դերում եւ Տոմաշեւիչը Սպարաֆուգիլի դերում չը փչացրին ընդհանուր անսամբլը:

Օպերան առհասարակ շատ էին կրճատել եւ դրա համար էլ շուտ վերջացաւ այդ գիշերը: Ա. Մամաջան

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Սեպտեմբերի 25-ին

Զօկերի բազմաթիւ վնասակար սովորութիւններից մէկն էլ նրանց ամուսնանալու ձեւն է: Եստ փոքր հասակից հեռանալով հայրենիքի, նրանք շատ քիչ ընտանիքի եւ օրորդներին են ծանօթ լինում, իսկ մեծ մասամբ զօկն իր հայրենիքից է աղջիկ առնում:—Ահա մի գեղեցիկ օր, երբ երիտասարդը իրան ապահով է գգում նիւթական կողմից եւ ունի ընտանիքային յարմարութիւններ, վերադառնում է իր հետաւոր բնակավայրից հայրենիքը յատկապէս պատկանելու նրա համար, որ պէտք է պատկանի...

Ինչ դժուար բան է նրա համար աղջիկ ձուլել:—Կորմիր-Կիրակէի եւ Աստուածածնի տօներին կը լինի Վերին-Ագուլիսում, Վարդապետին—Տանակերտում, ա. Սարգսի տօնին—Ներքին-Ագուլիսում, ուր ի ցոյց են հանվում հասած աղջիկները: Ամեր երիտասարդը հեշտութեամբ կարող է ընտրել հարսանացու: Միթէ պատկանելու համար հարկաւոր է սիրել, համակրել, բաւական է, որ աղջիկը գեղեցիկ է, վերջին մօղայով հագնված, հարուստ ընտանիքի զաւակ է, փող ունի եւ մեր փեսացուն ուրիշ բանի կարիք չունի, էլ չեն հարցնում թէ աղջիկը գիտէ արդեօք եփել—թխել, կարծես անհարկ: Ինչ ընտրութեան տէր է, հիւանդ չէ արդեօք... Իսկ փեսացուի ինչն է հետա-

քըրքում ծնողներին եւ նազելի օրորդներին:—3—4—5 վերստ հեռաւորութիւն ունեցող գիւղերը իրար աղջիկ չեն տալիս, առարկելով թէ հետի առ Վերին եւ Ներքին ագուլիցիները, իրանց քաղաքացի կարծեով, աղջիկ չեն տալիս: Չի՛մ գիւղեր, հաղան շուրս տղօ չի, հովան չիմ գիւղիս» ասում էր մի օրորդը, հաղան շուրս տղօ ա, գէշ ա» ասում է մի ուրիշը, հաղին տնաբերը սարուն չի», ասում է երրորդը, «եթէ պատկին եւ ինձ քաղաք տանի, կը գնամ», պատասխանում է չորրորդը:

Ասածներս մեծ մասամբ վերաբերում են միջակ եւ հարուստ հարսնացուներին, վայն եկել է տարիքը ճարտիքի» աղջկան, որքան էլ գեղեցիկ լինի նա, ինչքան գնահատելի ու համարելի արժանաւորութիւններ էլ որ ունենայ, դարձեալ ոչ մի երիտասարդ նրա վրա ուշադրութիւն չի դարձնի. նրա տեղը Ագա, Ջուրա, Բիստ, Փառակա եւ ուրիշ «սօր» գեղերն են... հարուստն էլ է վաղուս հարստի աղջկայ ետեւից, աղքատն էլ Եւ այն էլ մի, երկուս երեք աղջիկ չեն ուզում: Եղել են երիտասարդներ, որոնք 8—10 աղջիկ են ուզել եւ ոչ մէկը չէ աղջկան: Պատահել է, որ մի եւ նոյն աղջկան մի քանիսն են ուզում: այս տարի մի աղջկայ ձեռքը զանազան գիւղերից 8 հոգի էին խնդրում...

Յարգելի փեսացուներ, 1—2 ամսում երբեմն լաւ կով չի աղողվում ճարել եւ գնել: 25 որ կիրն պէտք է ընտանեկան եւ մայրական պարտաւորութիւններ կատարէ—լաւ մտածեցէ՛ք այս բոլորը, որ յետոյ ձեր ընտանիքում երկպառակութիւններ եւ թիւրմիտացութիւններ տեղի չունենան:

Հայր.

ՆԵՐՔԻՆ ԱՌԻՐԵՐ

Չորեքշաբթի, հոկտեմբերի 9-ին, գիշերվոյ ժամի 2-ին, հաղորդակցութեան ճանապարհների միջոցով իշխան Սիմեոն Թիֆլիսից դէպի Մցխէթ, որտեղից Վաղիկավիզեան ճանապարհով կուղեւորվի Պետերբուրգ: Միջոցովին ճանապարհ գցելու համար կայարանում հաւաքվել էին Թիֆլիսի նահանգապետը, նրա օգնականը, Անդրկովկասեան երկաթուղու կառավարիչը եւ այլ անձինք:

Այսօր, հոկտեմբերի 11-ին, տեղի կունենայ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը: քննելու առանձին մասնաժողովի գեկուցումը եկեղեցական գինու եւ ընկերութեան կից առեւտրական բիւրօ հիմնելու մասին:

Վաղը, հոկտեմբերի 12-ին, Թիֆլիսից դէպի Ախալքալաք կը մեկնեն այն մասնաժողովի անդամները, որին ընտրել է Ախալքալաքի երկրաշարժից վնասվածներին նպաստող գլխաւոր կոմիտեւը եւ որոնք պէտք է ընդունեն կապալաւորից 7 գիւղերում երկրաշարժից վնասվածների համար նրա չինած տները:

Մօտ օրերումս վերջացան աշակերտների աւարտման քննութիւնները Թիֆլիսի այգեգործական ուսումնարանում: Այս տարի իրանց դասընթացն աւարտեցին այդ ուսումնարանում 7 հոգի:

«КРЕМЬ» լրագրում կարդում ենք հետեւեալը երգիչ Ամիրջանի մասին. «պ. պ. Ամիրջանի, Կօզմի եւ Եակօբօսի կօնցէրաւ էստեթիկական մեծ բաւականութիւն պատճառեց հասարակութեան Գահլիճում անգագար տեղի էին ունենում ծափահարութիւններ եւ լսում էին «բարվո»-ի ու «բիս»-ի անընդհատ ծայնը: Ամիրջանի հնչուն ծայնը ուժգին ալիքներով լցնում էր դահլիճը: Կօնցէրաւ ծրագիրը կազմված էր շատ զանազանակերպ, բայց նա աւելի եւս զանազանակերպ կը կրկնած պիէսներով: Ի վերջոյ մենք կարող ենք հաղորդել, իբրեւ լուր, որ պ. Ամիրջանը երգելու է էլիվալի օպերային խմբում. հիթէ այդ լուրը արդարաւնայ, այդ դէպքում չափված կը լինեն թէ էլիվալը եւ թէ հասարակութիւնը, առաջինը կը հարստացնէ իր խումբը մի լաւ արտիստով, իսկ հասարակութիւնը հնարաւորութիւն կունենայ զուարճանալու պ. Ամիրջանի երգեցողութեամբ»:

Ժողովրդական լուստարութեան միջոցաւորութիւնը շուտով կառավարիչ պետական խորհրդի քննութեան մի նախագիծ, որով գիւղական հասարակութիւններին արեւելքի մէջ վճիռներ կայացնել այն մասին, թէ իրանց միջոցներով բան մը գրել, սակայն բաղնիքին վերաբերեալ

բազմող ուսումնարանները ինչ տիպի պէտք է լինեն:

Ֆինանսների միջոցաւորութիւնը հաստատել է այն ծրագիրը, որի համաձայն հիմնվում են բարձրագոյն կուրսեր առեւտրական ուսումնարանների համար ուսուցչացուներ նախապատասխան:

Միջոցաւորութիւններ են յարուցված հիմնելու գիւղատնտեսական բարձրագոյն ուսումնարաններ կազմել եւ կուրսի քաղաքներում, ինչպէս նաեւ բարեփոխման ենթարկելու Նեժինի լիցէյը:

Ի նկատի առնելով պետական գանձարանի մեծ ծախքերը, ֆինանսների միջոցաւոր, մայրաքաղաքի քաղաքների ասելով, վաղաժամ է համարում բնակարանների հարկը յատկացնել յագուտ քաղաքներին:

ՄՈՒՐՁՈՒԴ-ԱԼԻ գիւղից (Սուրմալուի գաւառ) մեզ գրում են. «Երկրագործ դասակարգը մի առանձին յուսով էր օգտագործ սեպտեմբերի 23-ին, երբ պիտի լինէր միարեւ ընտրութիւնը: առաջիկայ հետեւեալի համար: Այդ օրը պէտք է որոշվէր երկրագործ դասակարգի լինել չը լինելու հարցը: Իւրաքանչիւր տասը տունից ընտրված ծայնաւորները առանձին աշխուժով եւ յուսով շտապում էին էվլիլարի հասարակութեան դատարանը, իբր բարեխիղճ միտքը ընտրելու: Սուրմալուի գաւառի ազգաբնակչութեան թախտը կախված է միտքի կամայականութիւնից: Բոլոր ծայնաւորները մտադիր էին մինչեւ անգամ քուէի չը ենթարկել Ներկայ միտքին... Բայց, մի դիւթական գաւառացի օղի մէջ երկու երեք անգամ ձօնվելուց յետոյ, ամբողջ գեհնիկ ծայնաւորները հալ ու մալ եղան եւ վայրկեանպէս մոռացան իրանց սխառած մտադրութիւնը, որի հետեւանքը եղաւ նոյն միտքի: Այլ բէկի նորից միտքը ընտրվելու եւ նրա փետայ նախաՎալուլին նա օգնական ընտրելու:

ԲԱՇՆՈՐԱՇԷՆ գիւղից (Շարուր գաւառ) մեզ գրում են. «Շարուր գաւառումստում աստիկ տարածված են սկարլառիս եւ զիֆտերի հիւանդութիւնները: վերջինից մեռնում են ոչ միայն ծծկեր երեխաները, այլ նոյն իսկ 8—9 տարեկանները: Յաճախ կրկնվում են դէպքեր, երբ մի տան մէջ վարակվում են բոլոր երեխաները, ի հարկէ այդ պէտք է վերագրել նրան, որ մեր գիւղական ժողովրդի մեծաւ մասնութիւնը չէ պահպանում բժշկական խորհուրդները, ինչպէս են» հիւանդին առանձնացնելը, չորերը եւ անկողինը ախտահանելը: Ամբողջ Շարուր-Գարալագեազ գաւառում կան միայն երկու բժիշկներ, որոնցից մէկի պաշտօնը վաղուց ազատ է: Զը նայելով որ այժմեան բժիշկ Մելիքեանը կատարում է եւ երկրորդ բժիշկ պաշտօնը եւ բացի դրանցից նուիրված լինելով իր կոչմանը, անընդհատ գիւղից գիւղ է հրաւիրվում եւ այդպէս օգնում է իրան գիւղացիներին, բայց վերջինների թիւը այնքան մեծ է, որ զգալի է լինում երկրորդ բժիշկի բացակայութիւնը, մասնաւոր այն դէպքում, երբ պ. Մելիքեանը պաշտօնով լինում է Գարալագեազում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Ա. ֆի օ - Գարա Կիսարի հրդեհը: Ա. ֆի օ - Գարա Կիսարի հրդեհին տեղացի հայրը բաւական ծանր վնասներ կրած են, ինչպէս կը գրէ Գէօթահիւյ առաջն. տեղապահ Մկրտիչ Վ. Աղաւունի: Պատրիարքարան հասած այդ տեղեկագիրին կը հասկցուի, որ հայերու 804 տուններ բոլորովին այրեր եւ 5000-է աւելի անձներ մնացել են անպատուար, առանց մէկ մասը իրենց կարասիները բոլորովին կորուսած են եւ շատերը կիսով եւ շատերն ալ մաս մը բաժն միայն կրցած են ազատել: Հրկիզեալ ժողովուրդը այժմ շրջակայքներ, մերձակայ լեռանց ստորոտները, երկաթուղւոյ կայարանները անպատուարժ քաղաքից կապով թշուառութեան մէջ: Այս աղետալի հրդեհին մէջ այրած են հայոց վարի թաղի ա. Թորոս եկեղեցին, յարակից վարժարանը՝ տակի խանութներով եւ առանցիկներով: Որչափ որ ազգին սեպական բաղնիքը քաղ ու կիր ըլլալով անվնաս կը կարծուի, առ այժմ կարելի չէ բուն բաղնիքին վրա բան մը գրել, սակայն բաղնիքին վերաբերեալ

բոլոր փայտեայ շէնքերը այրած են: Միայն
բոլոր բաղնիքներն շէնքերուն վնասը 500 ոսկի կը
հաշուեն: Նիւթական ահագին վնասներուն հետ
բարոյական վնասներն ալ մեծ պիտի ըլլան,
քանի որ հրդեհին պատճառաւ կարելի չ'ալիտի
չ'ըլլայ 800-է աւելի երկսեռ ուսանողները ըստ
առաջնորդ կրթիչ ու պատասպարելու Հայոց 1200
տոններէն 804-ը այրած են. այս այրած տու-
տոններէն շատերուն մէջ կը բնակէին երկու երեք
ներսէն շատերուն միասին: Այրած են նաեւ 250
խոյր մուշ, 3—4 մզկիթներ եւ մէկ երկու
թէքէներ: Շուկային մէջ վնասը քիչ է. հայոց
վեր թաղի ս. Աստուածածին եկեղեցին, ման-
կերու վարժարանը հազիւ ազատուած են: Առաջն-
ապարկային Գարահիւսար հասնելուն՝ այցելու-
թիւն տուեր է ջողաքին վսեմափայլ կառա-
ւորին: Կայսերական կառավարութեան զրկած
վնասները հետզհետէ հասնելու վրայ են: Մկրտիչ
կորստապետ կը յուսայ թէ մէկ քանի օրէն բո-
լոր հրկիզանքները կը պատասպարուին: Երբ նո-
րին կայսերական վեհափառութեան կողմէ
նորոշուած 100,000 զուտուշ լուրը կը հասնի,
միթէսարքի փաշան զայն կը ծանուցանէ ժո-
ղովրդեան՝ որ երախտագիտութիւն կը յայտնէ
եւ այս առթիւ ուղերձ մը կը հեռագրուի կայ-
սերական պալատ: Այդ ուղերձը կը ստորագրեն
թաղապետութեան նախագահ Շիւքրի Էֆենդին,
3 խոյր մը 3 հայ երեւելիներ ու տեղապահ: Եր-
կրտիչ վարդապետ՝ Էսկիշէհիբէն, Բեթա-
հիպէն հայ եւ ուրիշ ուսեիք հաւաքելով կը
բանէ հրկիզանքներուն: Մկրտիչ վարդապետ
պատրիարքարանէն նպաստ խնդրելով՝ հանգրձն
Պոլսոյ եւ Իզմիրի մէջ հանգանակութիւն մը
բանալու պէտքը կը չեղտէ՝ եւ սրտայայտ կը-
րով կը նկարագրէ աղէտին պատճառած թշուա-
սութիւնը: Կը լսենք թէ պատրիարքարանը
մատչի է հանգանակութեան ձեռնարկելու:
—Առանայ էն կը հաղորդեն մեզ, թէ Տէր-
Մովսէս եպիսկոպոս մէկ կողմէն կը զբաղի
ընտրական գործողութիւններով եւ միւս կողմէն
կը պարապի իր հոգեւոր պաշտօնով: Սեպտեմ-
բեր 1-ին կիրակի առաւօտուն տեղւոյն ս.
Ստեփանոս եկեղեցւոյն մէջ ի ներկայութեան
խում բազմութեան թուրքերէն լեզուով քա-
ղաք մը խօսեր է, բնաբան ունենալով աւետա-
րի մէջ յիշուած «Յայրսի աղկան յարու-
թիւն» եւ ի վեր հաներ է զօրութիւնը ու կա-
րուցութիւնը հաւատքին, որ այնքան զօրաւոր
էր Կաթողիկոսական ժողովրդագրութիւն մէջ: Մեր
թիթակիցը այս տեղեկութենէն յետոյ յիշելով
որ կաթողիկոսական ընտրութեան օրերը կը
մոտենան, հրապարակաւ հրաւեր կուղղէ բոլոր
բարձրատիկան եկեղեցականներուն, որ եթէ
կրէք մտադիր են մերժել հանրութեան ձայնը՝
որպէս զի յառաջ չը գայ վերջին անգամուն
ընտրութեան նման արդիւնք մը, որ այնքան
սուղի նստաւ թեմակալներուն: Նմանօրինակ
ազգաբարութիւն մըն ալ մենք թեմակալներ-
ուն ուղղելու պէտք կը տեսնենք, որպէս զի
անոնք ալ գիտակցութեամբ կատարեն ընտրու-
թիւնը, գիտալով թէ արժան լինի կարգի եկե-
ղեցականի պէտք ունի: Առանայ վարժարան-
ներ բացուեր են սեպտեմբերի 2-ին: Պիւտեի
անկութեան պատճառաւ վարժարաններու ընդ-
հանուր ծախքէն 100 ոսկի զեղչ մը եղեր է
այս տարի. հետեւաբար հոգաբարձութիւնը հար-
կադուեր է զեղչել տնօրէնին եւ ուսուցիչներէ
մինն ամսաթոշակներէն:

Զ Օ Լ Ա Յ Ի Թ Ա Ղ Ո Ի Մ Ը

Միայն ծրարութեան չէ, որ այսօր կորցնում է
զրականական մի մեծ աստղ: Ոչ, Ամեն կողմե-
րէ թափվում լինում ու ասփոտները ցոյց
տուն, թէ ամբողջ աշխարհում ինչպիսի տեղ
ունէր բռնած նա, որին թողում ենք այսօր:
Օտար ազգերից մէկի հետ Ջօլան կապված
էր իր ծագումով: Իտալացիներն են այդ ազգը
եւ զրանց լուսաւորութեան միջնադարը, որը
ինձ խնդրել է իտալիայի խորը վշտի ողջոյնը
այլ մեծ գրողի աճիւնին:
Յրաշատական հանրապետութիւնն էլ այս
լուսարկաւորութեանը մասնակցելու բաղձն
ունի...
Անշուշտ ապագան մանրամասն կուտունս-
սիւն Ջօլայի ապագայը, ցոյց կը տայ նրա իս-
կական տեղը գրականութեան մէջ, նրա անհա-
տական կեանքի նշանակութիւնը. կը պարզե-
այն ձեւը, որով նա իր շուրջն էր խմբում
մարդկանց մտքերը, որով նա ռաբլի կանգնե-
րից զօրք ու հասարակութիւն. լայն էջերով
կամեակացնէ այն ամենը, ինչ որ նրա զօրեղ
նկարագրութիւններ, բրիւէֆ պատկերներ

ոյժն էր կազմում, թերեւս բոլոր քաղաքով ալ
բաների վրա, ինչ որ շատերի զայրոյթն էր
չարժուում, նրազգացութեանն էր դիպում...
Ջօլան եկած էր մի միտքաւ կատարելու: Նա
էր այդ միտքաւ Պատկերացնել գրական կեան-
քը՝ հասարակութիւնը, նրա օրգաններն ու գոր-
ծոնները, միջավայրը, որով նա չըջապատված
էր, մարդիկ, որոնցից նա կազմված է. մոլու-
թիւնները, որոնք իշխող դեր են խաղում հա-
սարակական կեանքում, այդ կեանքի տարու-
թիւնն ու թշուառութիւնը, չարիքներն ու
տանջանքները... Այն, նա բաց է արել այդ բո-
լորի ճշգրիտ պատկերը ամենքիս առաջ...
Ամեն բանի մէջ նա բարձր էր դասում ճշ-
մարտութիւնը: Նա մի անհրաժեշտ պարտա-
կանութիւն էր համարում հալածել անիրա-
ւութիւնն ու նենգութիւնը եւ կատարել թշու-
ածներ մղել անարդարութեան դէմ...
Փոքրերը, դժբաղձները եւ զրկվածները, ո-
րոնց թշուառութեան վրա Ջօլան ուղղել էր իր
ամբողջ ուշադրութիւնն ու գիտութիւնը, զգում
էր, որ այսօր կորցրին իրանց բարեկամին,
իրանց ցաւակցին...
Եւ այդ բոլորի հետ միասին այս գրանդիզ
թափօրը, մեծարանքի այս բռն ու արտայայտ-
ութիւնը թողնում են նրա յետեւից մի անուն
փառագան, պատմութեան էջեր անմոռաց...
Լուսն է ճառախօսը եւ մի ակնթարթում
որոտնդոտ ծափահարութիւնները թնդացնում
են ամբողջ տարածութիւնը: Դրանից յետոյ
խօսել է սկսում «Գրականագէտների ընկերու-
թեան» նախագահ Արէշ Էնրման:
Նա համառոտակի բնորոշում է այն տաղանդը,
որը իր գրողը դրել է Ջօլայի բոլոր գործած-
ներում, այն չնորհալուծիւնը, որը կարողացել
է անդձեղձ «Thérèse Raquin»-ի, «Rougon-
Macquart»-ի, «Lourdes»-ի, «Rome»-ի, «Paris»-ի,
«Fécondité»-ի եւ «Travail»-ի նման երկեր:
—Եւ բաղդաւոր եմ զգում ինձ, ասում է
պ. Հերման իր ճառի վերջում, որ կարող եմ
իմ ուսուցիչը—Էմիլ Ջօլայի անունից բարձրաց-
նել թոյլ ձայնս եւ շուրջս խնայելով ժողովրդի
բազմութեանը կրկնել այն, ինչ որ Ջօլայի
կեանքի համետ ու մի եւ նոյն ժամանակ հի-
նայի նպատակն էր կազմում՝ «աշխատանք»:
Դրանից յետոյ խօսել է սկսում Անատոլ
Ֆրանսը:
—Էմիլ Ջօլայի բարեկամների կողմից կոչ-
ված լինելով խօսելու այս դամբարանի առաջ,
ասում է նա, ես նախ եւ անոյ մատու-
ցանում եմ նրանց յարգանքն ու մեծարանքը,
վիշտն ու ցաւակցութիւնը:
Պարոնքի! Եթէ մենք աչքի առաջ ունենանք,
թէ ինչպէս կամաց-կամաց, աստիճան աստի-
ճան բարձրացել են Ջօլայի երկարափութիւն-
ները, այն ժամանակ անկարող կը լինենք ա-
ռանց հիացմունքի չափել նրանց մեծութիւնը:
Նրանց ազդեցութեան տակ մարդ հիանում ու
զարմանում է, զօգնաւորում ու դատաւիտում:
Այն, մի եւ նոյն թափով ներգործեցին գո-
վեստն ու դատաւիտումը: Նրանք չնորհալու-
գրողի հասցեով ուղղել են անկեղծ յանգիմա-
նութիւն, սակայն անարդար...
Երբ մարդ բաց է անում Ջօլայի հակառակ
երկերը, այն ժամանակ երեւում է այն խորը
միտքը, որով իր են նրանք: Դա բարութիւնն
է: Այն, Ջօլան բարի էր բառիս բուն մտքով
նա ունէր մեծ մարդկանց յատուկ անկեղծու-
թիւնն ու պարզութիւնը: Նա բարոյական էր
արտի ամբողջ խորքից: Նա հանճարեղ, բայց
խիտ ձեռքով պատկերացրել է կեանքի զեղ-
խութիւնը: Նրա ակնյայտի պեստիդով եւ
մտայլ զայրոյթը, որ օգնում են բազմաթիւ
երեւոյթներ, իրանց մէջ պարունակում են մի
իսկական օգուտմիջոց, որի հիմքն են կազմում
մարդկային մտքի առաջադիմութիւնն ու ար-
դարութիւնը:
Նրա վէպերը քաղաքական տեսութիւններ են,
նրանց մէջ Ջօլան ուժեղ ասեղութեամբ մտա-
կում է ծոյլ ու դատարկ հասարակութիւնը,
օտոր ու վնասակար ազնուականութիւնը: Նա
միշտ կոչվում էր մեր ժամանակի հիւանդու-
թեան դէմ—փողի հօգուցութեան դէմ: Նա դե-
մոկրատ էր, բայց երբեք չէր շոյում ժողովրդին:
Նա միայն աշխատում էր ցոյց տալ՝ տգիտու-
թիւնից առաջացած ստրկութիւնը, աղիւսից
պատճառած վտանգը, ամենայն յիմարութիւն
եւ ճնշում, չարութիւնն ու անաւտօթութիւն...
իր վերջին գրքում նա ցոյց է տուել իր բուն
օգէր դէպի մարդկութիւնը: Նա աշխատել է
նախագուշակել աւելի լուս ապագայ, աւելի լու-
սաւարակութիւն...
Նա ցանկանում է, որ երկրիս վրա աւելի
շատ մարդիկ երջանիկ լինեն:

Ջօլան իր մեծութեամբ համեմատվել կարող
է միայն Տօլստոյի հետ:
Դրանից յետոյ ճառախօսը ընդհանուր գծե-
րով բնորոշում է այն դերը, որ խաղաց Ջօլան
Իրեյնիցի դատի ընթացքում եւ եղբակա-
նում է, թէ նա միանգամայն արժանի է Ֆրան-
սիայի մեծ գաւազն կոչվելու, որովհետեւ—«նա
բաղաժիւր հանճարեղ գրողաւորներ եւ մի մեծ
գործողութիւն»...
Վերջում է թաղում եւ սգազգաց հաստ-
ապարկութիւնը սկսում է կամաց-կամաց ցրվել:
Բայց յանկարծ օդը թնդում է որոտնդոտ
բացականչութիւններով. համակրական ցոյցերի
տոտրկայ են դառնում Ժօլէս, Լաբօրի եւ Գըն-
դապետ Պիկար:
Ե. Թ.
ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ
—Վիեննայի «Zeit» լրագիրը հրատարակել է
գնենքալ ծննդի նամակը, որ նա գրել է իր
փախուստի օրը, հոկտեմբերի 8-ին (ն. ա.):
Այդ նամակում ծննդի ասում է, թէ բոլորա-
կան ժողովրդի մեծ պատերազմը սկսված է:
Բոլորական ժողովուրդը չէ կարծում, թէ պա-
տերազմի միջոցով կարող է ստիպել Թիւրքի-
յին իրազգրելու Սան-Ստեփանօյի դաշնագրերը:
Նա կոչվում է լու միայն նրա համար, որ թո-
թափէ իր վրայից բռնութեան ծանր լուծը եւ
ստանալ վերջապէս, մարդկային իրաւունքներ
—Սօֆիայի լրագիրները լինէն իր զանազան
տեղեկութիւններով Ստեփանօյի ապստամ-
բութեան մասին «Вечерняя Почта» լրագրին
հեռագրում են Կիւտեմարից, սեպտեմբերի
27-ին. «Սեպտեմբերի 25-ին եւ 26-ին ապա-
ստամբ գիւղացիները պարտեցին Ջուսիսեա քա-
ղաքը եւ արհեստանոց կուլից յետոյ յետ նահան-
ջեցին՝ խնդր թիւրքերից երեք թնդանօթ:
Ապստամբները աւերեցին մի քանի գիւղեր,
քանդեցին կամուրջները եւ գրաւեցին գլխաւոր
խնդրին, որ տանում է դէպի Կիւտեմար: Այն
տեղեկութիւններով, որոնք ստացված են յա-
տուկ սուրհանդակների միջոցով, ապստամբնե-
րը նորից պատրաստվում են յարձակվելու
քաղաքի վրայ: Սօֆիայի լրագիրներին ասե-
լով, սեպտեմբերի 27-ին բոլորաւ-մակաւոր-
նական ռազմաւոր վրա տեղի ունեցաւ ա-
րիւնահեղ ընդհարում: Բոլորական սան-
մանապահ գիւտեմարի եւ մակեդոնական
մի ապստամբական հրոսակալների մէջ, երբ
վերջինը անցնում էր սահմանը: Բայց հէնց
որ ապստամբները յետ նահանջեցին եւ անցան
Թիւրքիսի հողը, նրանց վրա տեղացին գնդակ-
ներ թիւրք սահմանապահ զինուորների կողմից:
Այսպիսով երկու կողմի մէջ ընկնելով՝ ապս-
տամբական զորաբաժինը ցրուեց եւ փախուստ
տուեց դէպի լեռները: Այդ դէպքը մեծ յու-
զումն առաջ բերեց Սօֆիայի հասարակութեան
մէջ:
—«Temps» լրագիրը յայտնում է, թէ մակե-
դոնական ապստամբութիւնը աղիւսութեան ոչ
մի յոյս ունենալ չէ կարող, եթէ տեղի չունե-
նայ միջամտութիւն պետութիւնների կողմից:
Բայց պետութիւնները դէմ են այդ տեսակ մի-
ջամտութեան, որովհետեւ չեն կամենում վը-
տանգի ենթարկել ընդհանուր խաղաղութիւնը:
Բոլորական անապատութեանը բաւականու-
թիւն տալու համար ի հարկէ, Եւրոպան կա-
րող էր նպատակել բեֆօրմներ մացնելու գործին:
Ստեփանօյի վրայ, բայց նա համակրութեան նը-
շոյլ անգամ չէ ասածում մակեդոնական կօմի-
տեաների ձեռնարկած ապստամբական փորձերի
վերաբերմամբ:
—Բերլինից հեռագրում են «Daily News»
լրագրին, թէ բօքսերի ընդունվելու հարցը
Վիէննայի կայսրի համարվում է առ այժմ վճռու-
ված բացասական մտքով, բայց այդ հարցը յե-
տոյ կը բարձրացվի կրկին անգամ:
—Ի յիշատակ կամ իջնատիկի այցելու-
թեան բոլորական մայրաքաղաքին, Սօֆիայի
չըջանային խորհուրդը որոշեց 5,000 ֆրանկ
նշանակել մի արձան կանգնեցնելու Իգնատիւ-
կին Սօֆիայում նրա անունով կոչվող փողոցի
վրա: Կոմս Իգնատիւկ իր կողմից 20,000 ֆը-
րանկով գնեց մի հողաբաժին Երազլայի տաճա-
րի մօտ, որպէս զի այնտեղ իր հաշուով մի ա-
պստամբական հիմնէ բոլորական այն ինվալիդ-
ների համար, որոնք մասնակցեց են ազատու-
թեան պատերազմին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՏՏ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻԺ
9 հոկտեմբերի
ՏՈՒԼԱ: Կալիբի գէմալօյն ընդունեց մի ա-
ռաջարկութիւն արձաններ կանգնեցնելու մա-
սին այն տեղերում, որոնք պատմական նշա-
նակութիւն ունեն թաթարական լուծի ժամա-
նակներից:
ՊՈՒՍՏԱ: Գաւառական գէմալօյն կարծիք
յայտնեց ապագայի ունեցողներին ընտրողական
ժողովներում մասնակցելու իրաւունքից զրկե-
լու դէմ:
ԿՕՂԵՀԱԳԵՆ: Լանդաւորներ մերժեց դանիա-

կան արեւմտեան-հնդկական կղզիները Միա-
ցեայ-Նահանգներին վաճառելու առաջարկը:
ՍՕՖԻԱ: Միջնադարական ճգնաժամի լուրը
հերքվում է:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հոկտեմբերի 9-ին Մեծ-Իշ-
խան Վրադիմիր Ալեքսանդրովիչ մեկնեց դէպի
Շրինսէլբուրգ՝ ներկայ լինելու Շրինսէլբուրգի
առման 200-ամեայ յօրելանի տօներին: Հոկ-
տեմբերի 9-ին տեղի ունեցաւ ֆինանսների
միջնադարի օգնական Կովկասեցի յօրելանի
կատարումը, նրա՝ առեւտրի եւ արդիւնաբերու-
թեան հիմնարկութիւնների գլուխ անցած լի-
նելու տեսանկյունի լրանալու առթիւ: Հաս-
դէսի ժամանակ կարգադրեց ուղերձ, որ ներ-
կայացրել էին այն հիմնարկութիւնների պաշ-
տօնատեղերը, որոնք գտնվում են նրա իշխա-
նութեան տակ: Հիմնված է թոշակ նրա ա-
նունը ֆինանսների միջնադարութեան գիւղա-
կան արհեստանոցներից մէկում:
ՊԱՐԻԶ: Ոտարկանական գործակալը ձերբա-
կալեց մի անիշականակալ, որ պատրաստվում
էր անցնել պալատի այգու վանդակապատի վը-
րայից: Նրա մօտ գտնված է ատրանակաւ Մե-
թաղում են, որ նա կամենում էր օգտնել
նախագահին:
10 հոկտեմբերի
ԼՕՆԴՈՆ: Համայնքների ժողովում Կրանօրն
յայտնում է, թէ կառավարութիւնը հարկադրա-
բար պահանջեց Բ. Դոնից, որ անկարգութիւն-
ների դէմ միջոցներ ձեռք առնելու չը դիմեն
տրտակարգ խօտութիւնների:
ԼՕՆԴՈՆ: Այստեղ եկած բօքսական գնենքալ-
ները յայտնեցին, թէ մտադրութիւն չունեն աշ-
խատելու տեսակցել Ձեմբերլէնի հետ: Դէպէս
կուղեւորով հարաւային Աֆրիկա:
ՆԻՒ-ԵՕՐԿ: «Tuibuna» հաղորդում է, թէ
Սամոայի վերաբերալ վճէր չվէրական թագա-
ւորը վճեց յօգուտ Գերմանիայի:
ՖՐԱՆԿՖՈՒՐՏ: Նիւ-Եօրկից հաղորդում են,
թէ թիթի 70 գործարաններ հարաւային շատա-
ներում կազմեցին սինդիկատ 30,000,000 դո-
լար գրաւագրելու:
ՊԵՐՍԻԱ: Այրի կայսրուհու հարսը դիպրօմ-
ալական կօրպուսի տիկիններին նախաճաշ
տուեց: Անգլիական դեսպանատան տիկինները
հրաժարվեցին:
Կ. ՊՈԼԻՍ: Բ. Դոնը հերքում է այն լուրը,
թէ Կրուպնիկ գիւղի մահմեդական ազգաբնա-
կուցիւնը այրեց բոլորական երկու գիւղեր
եւ բռնութիւններ գործ դրեց կանանց ու երե-
խաների վրա, եւ յայտնում է, թէ բոլորները
անարգել վերադառնում են գիւղերը:
ՍՕՖԻԱ: Կօնստան մեկնեց ոչ դէպի Կ. Պո-
լիս, այլ դէպի Պարիզ:
ՔԱՐԻՉ: Այն մարդը, որ կամենում էր անց-
նել Երիւսան պալատի վանդակապատի վրայից,
հիւանդանոցից արձակված մի խելագար է:
ՍՕՖԻԱ: Ստամբուլով սպանութեան վերա-
բերալ դատի վերաքննութեան ժամանակ՝ մե-
ղադրողը, որին իսլիւ են կանչում, հերքում
էր իր մասնակցութիւնը օպանութեան մէջ:
Պետով վկան հաստատապէս չը կարողացաւ
մատնագրոյ լինել իսլիւ վրա: Տօքօրով մատ-
նանիչ է անում նրան, որպէս մի անձի, որ
արձակել է առաջին գնդակը: Վկաները կրկնե-
ցին Ստամբուլովի ասածը, որ մահվան անող-
նում տուեց իսլիւ եւ ուրիշների անունները:
ՍՕՖԻԱ: Կառավարութիւնը աքսորեց 35 մա-
կեդոնացիներ, որոնք պատրաստվում էին
սպանդանքի վրայ անցնել սահմանը Պետ-
րիզում գործում է տեղական ապստամբների
զօրաբաժինը: Թիւրքերը գրաւեցին Բուպէշի
անցը:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Правительственный Вест-
ник-ում հրատարակված է հակառակադատա-
յին տանաժողովի կողմից, թէ Օդեսայում
սեպտեմբերի 29-ից մինչեւ հոկտեմբերի 7-ը
տեղի են ունեցել ժամապատից հիւանդանալու
երկու դէպքեր, ընդամենը հիւանդութիւնների
ոկզգից եղել են 47 դէպքեր, —մայիսին եւ յու-
նիսին մէկ-մէկ հատ, յուլիսին եւ օգոստոսին—
11 եւ սեպտեմբերին—26:
ՎԻԵՆՆԱ: Բանուորները ընդունեցին
Բուգլէլաի առաջարկութիւնը միջնորդ դատա-
բան նշանակելու եւ աշխատանքներ սկսելու
մասին: Գործադուր վերջացած է յայտարար-
ված:
ՍՕՖԻԱ: Լուրեր են պատում, թէ իբր Աբ-
րահիմ եւ Կօնստանտինով միջնադարները դուրս
են գալիս միջնադարութեան կազմից:
ԽՐԱՅԵՐ՝ ԱԼԷՔՍԱՆԻՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակելու է ՌԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

